ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր 30/08/2018

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:
Բացակա էին՝ Արտակ Ալոյանը, Գեվորգ Սաքանյանը, Սմբատ Սմբատյանը, Վալոդյա Սմբատյանը
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը

Լսեցին
30.07.2018թ.-ի թիվ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

Հաստատել 30.07.2018թ.-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը.

1.ՄԵԼԱՆՅԱ ՕԳՍԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով 28.01.2018թ. ,, Եղեգնաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին,, թիվ 04 որոշումը.

Համայնքային բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) ոլորտի բաժին 10 խումբ 7 դաս 1 այլ նպաստներ բյուջեից հոդվածից /հոդված 4729/ Մելանյա Օգսենի Հովհաննիսյանին հատկացնել 15000 դրամ օգնություն:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /*Զեկ.* ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ ՀՀ առողջապահության նախարարության ,,Առողջապահության ԾԻԳ,, ՊՀ-ի կողմից նախատեսվում է Վայոց ձորի մարզում կառուցել նոր բժշկական կենտրոն.

1. Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Զորավար Վարդան փողոց 12/1 հասցեում գտնվող, 10-001-0135-0081 կադաստրային ծածկագրով, 1 հա մակերեսով հողատարածքը նվիրել պետությանը՝ բժշկական կետրոն կառուցելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-7 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66/

Ավագանու անդամներ

ԱՐՏԱՇ ԱՅՎԱԶՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ* _____

Նիստն արձանագրեց՝ Անժելա Սարգսյանը _____